

Խալիներ

Ժամանակի սահմանափակում՝ 2 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

ԱՅՍ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՆՈՐԻՑ ՈՒՂԱՐԿԵՔ

Անվերջ երկար միջանցքում փռված են N հատ խալիներ: Միջանցքը բաժանված է հավասարաչափ մասերի, որոնք համարակալված են ամբողջ թվերով: Ամեն մասի վրա դրված է մեկ հատ սալիկ: i -րդ խալին ծածկում է $l[i]$ -ից $r[i]$ համարները ունեցող սալիկները (ներառյալ $l[i]$ և $r[i]$ համարները ունեցող սալիկները): Նկատենք, որ մի քանի խալի կարող են ծածկել միևնույն սալիկը: Ձեր խնդիրն է գտնել խալիների մաքսիմալ քանակը, որոնք ծածկում են գոնե մեկ ընդհանուր սալիկ:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են խալիների N ($1 \leq N \leq 100\ 000$) քանակը: Հաջորդ N տողերից յուրաքանչյուրում տրված են երկուական թվեր՝ հերթական խալու ծածկած սալիկների հատվածը նկարագրող $l[i]$ և $r[i]$ թվերը ($1 \leq l[i] \leq r[i] \leq 10^9$):

Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ խալիների մաքսիմալ քանակը, որոնք ծածկում են գոնե մեկ ընդհանուր սալիկ:

Օրինակներ

Մուտք	Ելք
4	3
1 2	
2 3	
3 3	
3 4	

Գնահատում

Թեստերի 25 տոկոսում $N \leq 1000$ և $r[i] \leq 1000$: Թեստերի մեկ այլ 50 տոկոսում $r[i] \leq 1000\ 000$: